ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-180
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» «04» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, և Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող նախագահ Հ. Խաչատրյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել 19-րդ Ոսկե ծիրան միջազգային կինոփառատոնի իրականացման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1), ծախսերի նախահաշվի (Հավելված N 2) և կատարողական ցուցանիշների (Հավելված N 3):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 *Պետական մարմինը պարտավոր է՝*

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 13-ի N 646-Ա/2 հրամանի՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Կինոարվեստի նախագծեր» անվանակարգի մասնագիտական խմբի 2022 թվականի մարտի 10-ի նիստի N 5 արձանագրությունը՝ Կատարողին հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1056. Կինեմատոգրաֆիայի ծրագրի» «11005. Աջակցություն կինոարվեստին» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. *Պետական մարմինն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի (ինչպես նաև համաֆինանսավորման մասով ըստ պահանջի) և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել ***«Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,***

2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.4. *Կատարողն իրավունք ունի՝*

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 45000.0 հազար (քառասունհինգ միլիոն) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելվածի N 2,

3.2.Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.4. *Կատարողն իրավունք ունի՝*

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 45000.0 հազար (քառասունհինգ միլիոն) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելվածի N 2,

3.2.Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պետական մարմինը իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարե-

ցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը,

9.2. Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 14 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ
Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Բայրոնի 5
Կառավարական տուն 2	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 1570018400480100 ՀՎՀՀ 01556218
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732	Հեռ՝010-52-10-42
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Գ. Սաֆարյան	Հ. Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
15 09 2022թ.
N ՄՇԴ- 180 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ
19-րդ Ոսկե ծիրան միջազգային կինոփառատոնի

1	Կազմակերպության անվանում	Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Մոսկովյան փ. 3, 0001, Երեւան
3	Ծրագրի անվանում	19-րդ Ոսկե ծիրան միջազգային կինոփառատոն
3.1	Բովանդակություն	Ոսկե ծիրան միջազգային կինոփառատոնի 19-րդ թողարկումը նախատեսվում է իրականացվել ամբողջական մասշտաբով՝ Տարածաշրջանային լիամետրաժ, Տարածաշրջանային կարճամետրաժ, Միջազգային մրցույթ, Համահայկական կինոհարթակ և Միջազգային մրցույթային ծրագրեր, կենդանի ձեւաչափով, մոտ հարյուրին հասնող միջազգային հյուրերի ներկայությամբ, թե՛ ներկայացուցչական, թե՛ ցուցադրական եւ թե՛ արտադրա-կրթական բոլոր ուղղությունների լիակատար գործարկմամբ: Ներկայացուցչական՝ Փառատոնի ընթացքում ներկայացված կլինեն Հայաստանի պետական մշակութային քաղաքականության համար կարեւոր երկրներն ու տարածաշրջանները ներկայացնող հյուրեր (Ռուսաստան, ԱՊՀ երկրներ, ԱՄՆ, Ֆրանսիա, Առաջավոր Ասիայի պետություններ): Փառատոնի շրջանակում նախատեսվում է հյուրընկալել ոչ միայն մասնագիտական մամուլը ներկայացնող մասնագետների (լրագրողներ, կինոքննադատներ եւ այլն), այլեւ ավելի լայն տիրույթի եւ մեծ լսարանի ներգործությամբ բլոգերներ, լրագրողներ, ինֆլյուենսերներ, որոնց ցանկը պատրաստվում ենք համաձայնեցնել ՀՀ Զբոսաշրջության կոմիտեի հետ, որպեսզի փառատոնի եւ զբոսաշրջության պետական քաղաքականության առաջնահերթությունները

մեկտեղվեն:

Փառատոնի հեռահար նպատակներին (տարածաշրջանային ուղղվածությամբ առաջատար փառատոն) ընդառաջ հատուկ շեշտադրությամբ կիրականացվեն Տարածաշրջանային համայնապատկեր եւ Կորիզ (կարճամետրաժ ֆիլմերի տարածաշրջանային մրցույթ) ծրագրերը՝ ամբողջ Առաջավոր Ասիայի ընդգրկուն ներկայացուցչությամբ:

Տարածաշրջանային ծրագրերը միտված են լինելու հայկական կինոարտադրությունը լավագույնս ներկայացնել միջազգային փառատոնի շրջանակում: Միջազգային պրակտիկայում ընդունված քվոտավորման սկզբունքով հայկական ֆիլմերը տոկոսային հարաբերակցությամբ ավելի մեծ մասնաբաժին են կազմելու, քան այլ երկրներինը: Այդպիսի փորձառություն իրականացվել է նախորդ՝ 19-րդ փառատոնում:

Քվոտավորման սկզբունքով հիմնական միջազգային մրցույթային ծրագրում նախատեսում ենք հայկական կինոարտադրության տվյալ տարվա լավագույն նմուշի ներկայությունը, ինչը հնարավորություն կտա միջազգային ժյուրիին պարտադիր կերպով ծանոթանալ հայկական կինոարտադրության լավագույն օրինակներին:

Թողարկմանը ակնկալում ենք մոտ 10 դեսպանության եւ 5-ից ավելի միջազգային կազմակերպությունների ներգրավվածություն:

Փառատոնի ընթացքում նախատեսում ենք վերականգնել Կաննի միջազգային կինոփառատոնի հետ 2019-ին սկիզբ դրած համագործակցությունը, մասնավորապես՝ Ֆրանսիայի Անկախ կինոմատոգրաֆիստների ընկերակցության (ACID) հետ պաշտոնական համագործակցությամբ:

Նախատեսում ենք իրականացնել համատեղ ծրագրեր Ամերիկյան հեղինակավոր UCLA համալսարանի եւ Sundance Film Institute Կինոյի եւ հեռուստատեսության ամբիոնի հետ, միեւնույն ժամանակ ներգրավելով ԵԹԿՊԻ-ն եւ այլ մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Վերջին տարիներին Երեւանի քաղաքապետարանի հետ համագործակցության որոշակի պասիվացումից հետո նախատեսում ենք ավելի սերտ համագործակցություն եւ փառատոնի ավելի հստակ զուգաբանում Երեւան քաղաքի

		հետ, միեւնույն ժամանակ է՛լ ավելի ընդլայնելով փառատոնի մարզային ակտիվությունը: Թողարկման շրջանակում ներկայացված կլինեն 100-ից ավել ֆիլմեր ամբողջ աշխարհից՝ համաշխարհային առաջատար փառատոների լավագույն նմուշներից մինչեւ նոր ձայներ եւ բացահայտումներ: Կլինեն հատուկ մարզային ծրագրեր եւ հատուկ ցուցաշար Արցախում: Մասնավոր սեկտորի աջակցությամբ նախատեսում ենք փառատոնային հյուրերի եւ փառատոնային մթնոլորտի լայնամասշտաբ տարածում ոչ միայն Երեւանի կենտրոնում, այլեւ արվարձաններում: Ֆիլմերի ցուցադրություններին նախատեսում ենք ավելացնել ներառականությունը՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց, զինվորների, բուժաշխատողների եւ ուսանողության լայն ներգրավվածությամբ: Կրթական/արտադրական հարթակ՝ AGBU-ի եւ Creative Armenia-ի հետ համատեղ նախատեսում ենք իրականացնել ավելի լայնամասշտաբ կրթական-արտադրական հարթակ՝ տարածաշրջանային ներգրավվածությամբ, ինչպես նաեւ համահայկական կինոհարթակի գործարկում, որը կծառայի որպես ցանց՝ ամբողջ աշխարհով մեկ սփռված հայ կինոգործիչների արդյունավետ փոխճանաչման եւ համագործակցության եզերերի որոնման համար: GAIFF Pro հարթակում ներկայացված կլինեն դեռ չավարտված հայկական կինոնախագծեր, որոնք միջազգային փորձագիտական հանձնախմբի կողմից կդիտվեն և կարժանանան համապատասխան մասնագիտական մեկնաբանությունների, իսկ լավագույնը՝ կստանա ավանդական ՀՀ Վարչապետի մրցանակը: Ծրագիրը կգործի ոչ միայն փառատոնային 7 օրերի (հուլիսի 10-17, 2022թ.) ընթացքում, այլեւ կունենա շարունակական եւ հետեւողական բնույթ ողջ տարվա կտրվածքով, մասնավորապես՝ փառատոնի մեկ այլ հեռահար նպատակի՝ Golden Apricot Film Institute-ին ընդառաջ կկազմակերպվի մասնագիտական միջազգային «ամառային դպրոց», որը կավարտվի օգոստոսի 1-ին: Փառատոնից հետո, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կիրականացվեն նաև հոբելյանական

		ծրագրերի մի մասը, ինչպես նաև՝ GAIFF Pro հարթակի վարպետության դասերի մի մասը, որոնք կապված են UCLA համալսարանի դասախոսների այցի հետ: Հիմնախնդրի եւ կարիքի հիմնավորում՝ Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր՝ Ոսկե ծիրան միջազգային կինոփառատոնը հանդիսանում է պետության մշակութային քաղաքականության եզակի հաստատուն, շարունակական եւ ներկայացուցչական զենքերից մեկը՝ ունենալով հարուստ պատմական հենք եւ հաստատուն դեր եւ նշանակություն պետության մշակութային վարկի եւ իմիջի դիրքավորման հարցում:
3.2	Նպատակ	Հայկական նոր կինոյի հանրայնացում: Հայ կինոյի միջազգայնացում Համաշխարհային լավագույն հեղինակային ֆիլմերի ձեռքբերում և ցուցադրում հայ հանդիսատեսին Մասնագիտական շրջանակներին ուղղված ծրագրերի իրականացում: Հայ կինոյի պատմությանն ուղղված հետահայաց ծրագրեր: Միջազգային լուսաբանման քանակի աճ Երևանի Կինոյի տան հանրայնացում՝ որպես մշակութային օջախ Միջազգային հյուրերին հայ մշակույթի ներկայացում
3.3	Անցկացման ժամկետ	Ապրիլ – սեպտեմբեր 2022թ. (6 ամիս)
3.4	Անցկացման վայր	Երևան, մարզեր
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ակնկալում ենք արդունքում ունենալ՝ ավելին քան 15 000 հանդիսատես, տարածաշրջանային ծրագրերում հայկական ֆիլմերի գերակա ընդգրկվածություն, աշխատանքային մասնագիտական հարթակներում հայկական նախագծերի ներկայացվածություն, միջազգային մրցույթային ծրագրում հայակական առնվազն մեկ ֆիլմի ընդգրկվածություն, համահայկական կինոհարթակի գործարկում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Հանդիսատեսի քանակը 2022-ին չնայած համավարակի, պատերազմի և այլ մարտահրավերների նախատեսում ենք՝

		մոտ 15000: Հայկական ֆիլմերի կամ նախագծերի քանակը կփորձենք հասցնել 20-ի: Հայկական կինոարտադրանքի առաջխաղացմանը ուղղված առանձին ծրագրերի քանակ՝ 5: Նախագծի հանրայնացման ընթացքում լրատվամիջոցների ներգրավվածությունը կփորձենք հասցնել 20-ի՝ միջազգային և 50-ի՝ տեղական: SMM (Social Media Marketing) ցուցիչները՝ Ֆեյսբուք՝ հետևորդների քանակի ավելացում 1000-ով Ինստագրամի հետևորդների քանակի ավելացում՝ 1000-ով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Կինոյի զարգացման
«Ոսկե ծիրան» ՀԿ
ք. Երևան, Բայրոնի 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570018400480100 ՀՎՀՀ 01556218
Հեռ՝010-52-10-42
Նախագահ՝
Հ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«15» «04» 2022 թ.
N ՄՇԴ-180 պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

19-րդ Ոսկե ծիրան միջազգային կինոփառատոնի իրականացման ծախսերի

N	Ծախսատեսակների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը, (հազար դրամ)
	1. Աշխատանքի վարձատրություն (ներառյալ հարկերը), այդ թվում՝				**15 220,0**
1.1	Փառատոնի նախագահ և պրոդյուսեր	ամիս	6	300 000	1 800,0
1.2	Գեղարվեստական տնօրեն	ամիս	6	250 000	1 500,0
1.3	Ֆինանսական համակարգող	ամիս	6	200 000	1 200,0
1.4	Միջազգային կապերի համակարգող	ամիս	6	200 000	1 200,0
1.5	Ծրագրերի տնօրեն և գլխավոր խորհրդատու	ամիս	6	200 000	1 200,0
1.6	GAIFF PRO ծրագրի համակարգող	ամիս	6	200 000	1 200,0
1.7	Միջազգային ծրագրերի համակարգող և գլխավոր խորհրդատու	ամիս	6	200 000	1 200,0
1.8	Մամուլի համակարգող	ամիս	3	180 000	540,0
1.9	Միջոցառումների համակարգող	ամիս	3	200 000	600,0
1.10	Գովազդային նյութերի դիզայներ	ամիս	3	180 000	540,0
1.11	Կամավորների համակարգող	ամիս	1	180 000	180,0
1.12	Մարքեթինգի և գովազդի համակարգող	ամիս	2	180 000	360,0
1.13	Ֆիլմերի ցուցադրման դահլիճների պատասխանատու	ամիս	2	140 000	280,0
1.14	Ֆիլմերի ցուցադրման ծրագրերի	ամիս	2	180 000	360,0
1.15	Բացման և փակման միջոցառումների բեմադրիչ ռեժիսոր	միջոց.	2	180 000	360,0
1.16	Տրանսպորտի համակարգող	ամիս	2	180 000	360,0
1.17	Լուսանկարիչ	մարդ	1	180 000	180,0
1.18	Գնումների համակարգող	ամիս	2	180 000	360,0
1.19	Գրասենյակի պատասխանատու	ամիս	6	160 000	960,0
1.20	Փառատոնի ֆիլմերի ընտրողներ	մարդ	4	210 000	840,0
	2. Կազմակերպչական ծախսեր, այդ թվում՝				**10 868,0**
2.1	Ֆիլմերի փոխադրում՝ ներբեռնման ծառայություն	ֆիլմ	9	107 333	966,0
2.2	Ֆիլմերի ցուցադրման հեղինակային իրավունքի ձեռքբերում	ֆիլմ	8	396 000	3 168,0
2.3	Կատալոգի խմբագրում, կազմում, էջադրում, սրբագրում, թարգմանում (125 էջ)	ծառ.	1	499 000	499,0
2.4	Ֆիլմերի տեքստերի թարգմանություն	էջ	750	5 800	4 350,0
2.5	Ֆիլմերի ենթագրերի տեղադրում	էջ	650	2 900	1 885,0
	3. Կեցության ծախսեր, այդ թվում՝				**6 342,0**

3.1	Հյուրանոց (միջին գին, 38 մարդ, միջինը 5 օր)	մարդ/օր	190	27 852	5 292,0
3.2	Սնունդ (35 մարդ, միջինը 5 օր)	մարդ/օր	175	6 000	1 050,0
	4. Մրցանակաբաշխություն, այդ թվում՝				2 500,0
4.1	Լիամետրաժ ֆիլմերի դրամային մրցանակ	մրց	1	1 500 000	1 500,0
4.2	Կարճամետրաժ ֆիլմերի դրամային մրցանակ	մրց	1	1 000 000	1 000,0
	5. Լաերտ Վաղարշյանի պատվո աստղի պատրաստում և տեղադրում Ազնավուրի հրապարակում, այդ թվում՝	հատ	1	570 000	570,0
5.1	Լատունից/արույր/ տարբեր չափսերի թիթեղ	կգ	20	6 300	126,0
5.2	Բազալտի մշակված քար (80սմ x 80սմ x 9սմ)	հատ	1	50 000	50,0
5.3	Լատունից աստղերի դետալների պատրաստում	դետալ	8	4 500	36,0
5.4	Լատունից տառերի կտրում հայերեն և անգլերեն	տառ	30	7 467	224,0
5.5	Տառերի մշակում և լատունից աստղի վրա զոդում	տառ	30	2 800	84,0
5.6	Լատունից աստղը բազալտի քարի վրա ամրացում	աստղ	1	30 000	30,0
5.7	Բազալտի աստղերի տեղափոխում և տեղադրում վերամբարձիչով	աստղ	1	20 000	20,0
	6. Դահլիճի վարձակալություն, այդ թվում՝				**2 000,0**
6.1	Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն	օր	7	142 858	**1 000,0**
6.2	«Մոսկվա» կինոթատրոն	օր	7	142 858	**1 000,0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**37 500,0**
	ԱԱՀ*				**7 500,0**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ				**45 000,0**

**** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ***

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ
ք. Երևան, Բայրոնի 5

«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570018400480100 ՀՎՀՀ 01556218
Հեռ՝ 010-52-10-42
Նախագահ՝
Հ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
15 ----- 04 ----- 2022թ.
N ՄՇԴ 180 պայմանագրի

Պետական դրամաշնորհի շրջանակներում իրականացվող միջազգային նախագծերի կատարողական ցուցանիշներ

19-րդ Ոսկե ծիրան միջազգային կինոփառատոնի

1. **Վաճառված տոմսերի քանակ (բացառությամբ հովանավորչական միջոցներով կազմակերպված միջոցառումների)**

18-րդ միջազգային կինոփաառտոնին կինոթատրոն Մոսկվայում վաճառված տոմսերի քանակն է՝ 2270, այս ցուցանիշից ավելին եղել են հրավիրվածներ և ուսանողներ: Հայաստանի կինոգործիչների միության դահլիճում ևս մուտը ազատ է եղել հանդիսատեսի համար, ինչպես նաև երկու վայրում էլ կազմակերպվել են ցուցադրություններ զինծառայողների և բժիշկների համար՝ նույնպես ազատ մուտքով: 2022թ-ին ակնկալվում է մոտ 5000 տոմսի վաճառք:

2. **Հանդիսատեսի քանակ (ներառյալ հրավիրված անձինք՝ տարանջատման սկզբունքով)**

2021 թվականին հանդիսատեսը Ոսկե ծիրան կինոփառատոնին մասնակցել է մի քանի սկզբունքով՝ պահպանելով ՔՈՎԻԴ-19-ի հակահամաճարակային բոլոր սահմանափակումները: Ցուցադրություններն անց են կացվել ինչպես վճարովի, այնպես էլ անվճար հիմունքներով՝ ապահովելով հրավիրվածների, հավատարմագրված մասնագետների և ուսանողների ազատ մուտքը: Ինչպես նաև, այս տարի, որպես հարգանքի տուրք մրցութային ֆիլմերի մուտքը ազատ է եղել բոլոր բուժաշխատողների համար:

18-րդ միջազգային կինոփաառտոնին հանդիսատեսի թիվը եղել է մոտ 7500:

2022 թվականին 19–րդ կինոփառատոնին փորձելու ենք հանդիսատեսի թիվը հասցնել 13 000-15 000:

3. **Հայկական ֆիլմերի կամ նախագծերի քանակ**

Հայկական ֆիլմերի հանրահռչակումը փառատոնի գլխավոր նպատակներից մեկն է, այդ իսկ պատճառով փառատոնի երկու կարևորագույն ծրագրերում՝ Տարածաշրջանային համայնապատկեր լիամետրաժ ֆիլմերի մրցույթում և Կորիզ կարճամետրաժ ֆիլմերի մրցութային ծրագրում ընտրության ժամանակ հայկական ֆիլմերին տրվում է առաջնահերթություն, ինչպես նաև հայկական բոլոր ֆիլմերը ազատված են հայտադիմումի վճարից: Բացի հիմնական երկու մրցանակներից, միայն հայկական ֆիլմերի համար առանձնացված է Գենադի Մելքոնյանի անվան հատուկ մրցանակը, որը ներառում է նաև դրամական պարգև՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով: 2021 թվականին, միայն կարճամետրաժ մրցույթում ներկայացված էր 9 հայկական ֆիլմ, որոնք ներկայացվեցին հանդիսատեսին

հատուկ պրեմիերայի ձևաչափով, ցուցադրության համար նախատեսված լավագույն ժամին՝ լեփ լեցուն դահլիճով: Ընդհանուր առմամբ՝ Տարածաշրջանային լիամետրաժ, Տարածաշրջանային կարճամետրաժ և GAIFF Pro հարթակում միասին նախատեսում ենք 20-ից ավելի հայկական կինոարտադրության ֆիլմերի ցուցադրություն:

4. **Հայկական կինոարտադրանքի առաջխաղացմանն ուղղված առանձին ծրագրերի քանակ**

   Հայ կինոյի առաջխաղացմանն են ուղղված՝ Համահայկական կինոհարթակ, Տարածաշրջանային համայնապատկեր, Կորիզ և GAIFF Pro ծրագրերը, ինչպես նաև միջազգային մրցութային ծրագրում հայկական ֆիլմի հավանական ներկայացվածությունը:

5. **Նախագծի հանրայնացման ընթացքում լրատվամիջոցների ներգրավվածություն (զուտ տեղեկատվություն և վերլուծական նյութեր, այդ թվում՝ օտարերկրյա ԶԼՄ-ներում)**

   Ստորև հղումով ներկայացված է փառատոնին անդրադարձած տեղական և արտասահմանյան ԶԼՄ-ների հրապարակած հոդվածների մի մասը.

   https://www.gaiff.am/press/responsys:

   Օտարերկրյա անդրադարձերի քանակը կփորձենք հասցնել 20-ի, իսկ տեղական լրատվամիջոցների քանակը՝ **50-ի:**

6. **SMM (Social Media Marketing) ցուցիչներ**

   Փորձելու ենք ֆեյսբուքյան և ինստագրամյան հետևորդների քանակը ավելացնել 1000-ական հետևորդներով:

7. **Պետական ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը ֆինանսավորման այլ աղբյուրների համեմատ**

   Մասնավոր սեկտորի ճգնաժամի պայմաններում կփորձենք ԿԳՄՄՆ ֆինանսավորման մասնաբաժնից ավել ձևավորել այլ աղբյուրներից՝ արդյունքում ունենալով մոտ 100 000 000 դրամ ընդհանուր բյուջեով փառատոն, ինչը կհամապատասխանի մեր չափանիշային ցուցանիշներին: Այս տարի, համատեղ բյուջեի ցուցանիշով, պետական ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը ֆինանսավորման այլ աղբյուրների համեմատ կազմում է համապատասխանաբար 40/60 %:

8. **Կազմակերպության հետ համագործակցող կամավորների քանակ:**

   Ամեն տարի փառատոնին, որպես կամավոր միանալու դիմում է ներկայացնում մոտ 200 մարդ: Ընտրությունը անցնում է երկու փուլով՝ հաշվի առնելով դիմողների մոտիվացիան, զբաղվածությունը և գիտելիքները: Անհատական հարցազրույցների միջոցով երկրորդ փուլից հետո ընտրվում է մոտ 60 կամավոր, ովքեր հստակ աշխատանքային պարտականություններ են ունենում և միանում են փառատոնի տարբեր բաժիններին: Կամավորները հնարավորություն են ստանում անվճար դիտել ֆիլմերը, մասնակցել վարպետաց դասերին, իսկ լավագույնս դրսևորած անձինք հաջորդ փառատոնին դառնում են թիմի լիիրավ անդամ:

9. **Գովազդատեղեկատվական արշավ. հանրային լայն ճանաչում ունեցող մարդկանց ընդգրկվածություն, նախագծի հանրային ճանաչելիության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ** Ընտրվալու է մոտ 50 ազդեցիկ սոցցանցային ու առհասարակ՝հանրային ճանաչում ունեցող մարդկանցից կազմված ֆոկուս խումբ, որոնց անհատական արշավները կշուգորդվեն փառատոնի պաշտոնական արշավի հետ:

10. **Հրավիրյալ ստեղծագործողների (հայ և օտարազգի) քանակ**

Հաշվի առնելով որոշակի ճամփորդական սահմանափակումներ այս տարի պլանավորում ենք հրավիրել 80 արտասահմանցի հյուր, հայ մասնակիցների քանակը կհասնի **մոտ 150-ի**, այդ թվում ակտիվ կինոգործիչներ և փառատոնի տարբեր ծրագրերում ներկայացվող հեղինակներ:

11. **Ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների ներգրավվածություն**

Բոլոր կինոգործիչները, անկախ տարիքից և բուն գործունեության ոլորտից կարող են դիմել փառատոնի ԱՆՎՃԱՐ հավատարմագրում ստանալու համար: Եթե դիմումը համարվում է բավարար, դիմորդը ստանում է փառատոնի բոլոր մրցութային ֆիլմերին, մամլո ասուլիսներին, վարպետաց դասերին և մի շարք այլ միջոցառումների մասին կանխավ իմանալու և անվճար մասնակցելու հնարավորություն: Նույն սկզբունքը գործում է նաև կինոյի բուհերի ուսանողների համար:

12. **Տեղական և միջազգային շահառուների արձագանքներ (ներառյալ՝ քանակ)**

Այս տարի փառատոնի ավարտից հետո, արձագանքներ ենք հավաքել բոլոր ներկա հյուրերից: Կից ներկայացնում ենք նաև դրանք, անկեղծ ձեր ուշադրությանը ներկայացնելով թե քննադատությունը և թե գովեստի խոսքերը Ոսկե ծիրան ՄԿՓ-ի հասցեին:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ
Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Բայրոնի 5
Կառավարական տուն 2	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 1570018400480100 ՀՎՀՀ 01556218
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732	Հեռ՝010-52-10-42
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Գ. Սաֆարյան	Հ. Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.